

ՄԵԼԻԿ

Հարկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Փ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բայի կիրակի և տոն օրերէն)
Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Հայտարարութիւնները համար վճարում են
խաւքանիւր թուին 2 կոպեկ.
Տ է Լ Է Փ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերահսկող անկախ պետք է լինի. Օրվայ հարցը. Սասունցի կնոջ արտասանած ճառը. Հայոց հարցը և Եւրոպական մամուլը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց կաթողիկոսի քարոզը. Նամակ Եւրոպայի. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիւրի տնտեսական խնդիրները. Նամակ թուրքիայից. Նամակ Պարսկաստանից.— ՀԵՌԱՅԻՐԵՆԻ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ թուրքիայից. Հայկական վեց նահանգների աղքատացումը և համեմատական ցուցակը.

ՎԵՐԱՀԱՅՈՒՐԱԿԱՆ ՊԵՏԻ ԼԻՆԻ

Մենք պարտք ենք համարում այժմ էլ, երբ Եւրոպական մամուլը արդէն իր կարծիքը յայտնեց հայկական ընթերցանիչի վերաբերյալ մասին, մեր համեստ ձայնը միացնել այն ընդհանուր ձայնին, որը պահանջում է նշանակել մի անկախ, թիւրքաց կառավարութեան հետ ոչինչ կապ չունեցող բարձագոյն կոմիտեայի, որպէս զի թուրքերը մեռած տառ չը մնայ, այլ որ և է արդիւնք ցոյց տայ:

Մենք հաստատ տեղեկութիւն ունենք Վ. Պօլսից, որ թէ Հայոց պատրիարքը, թէ Հայոց խառն ժողովը և թէ Վ. Պօլսի հայոց հասարակութիւնը շատ դժգոհ են թուրքերից յատկապէս այն պատճառով, որ նա չէ պահանջում մի անկախ վերահսկողի նշանակումը, այլ ընդհանրապէս ընթերցանիչի գործադրութեան վերահսկողութիւնը տալիս է մի այնպիսի կոմիտեայի ձեռքը, որը պէտք է նշանակվի սուլթանի կողմից.— թէ և պետութիւնների համաձայնութեամբ.— թիւրքաց պաշտօնական միջոցով, որը հաւանորէն թիւրքը կարող է լինել և որը իր ուժով պէտք է ստանայ օսման և կառավարութիւնից, որ կը նշանակի թէ կոմիտեայի անկախ լինելը չէ կարող, և ամեն բանում պէտք է զեկապարվի Բ. Գրան արամադրութեամբ և ցուցմունքներով:

Անկասկած, երբ թուրքի մանրամասնութիւնները յայտնի կը լինեն և թիւրքաց

Հայաստանում, երբ բուն Հայաստանի ժողովուրդն էլ, կամ զէթ նրա հասկացող մասը կիմանան, որ այդ համեստ թուրքի վրա հակոյն անգամ մի անկախ Եւրոպացի չը պէտք է լինի, այլ թիւրքաց իշխանութիւնից կախված, թիւրքաց ծառայութեան մէջ գտնվող, և նոյն իսկ թիւրք պաշտօնակցի, այն ժամանակ դժգոհութիւնը կը տիրէ ամբողջ Հայաստանում, ուր այժմ դեռ ևս սպասողական վիճակի մէջ է ամբողջ աղքատակոթիւնը...

Դժգոհութիւն Վ. Պօլսուց, դժգոհութիւն Հայոց պատրիարքարանում, դժգոհութիւն Եւրոպական մամուլի կողմից, վերջապէս դժգոհութիւն ամբողջ հասարակաց կարծիքի կողմից.— ահա թէ ինչ զրուծիւն ատաղ բերեց թուրքի այն կէտը, որը վերաբերում է բարձրագոյն կոմիտեային, կամ ուրիշ խօսքով՝ այն երաշխաւորութեան, որը Եւրոպան պէտք է տայ թիւրքաց հայերին: Այդ դժգոհութիւնը միանգամայն հասկանալի է.— ինչքան էլ զեղեցիկ, ազատամիտ օրէնքներ չը տայ Եւրոպան թիւրքիային, ինչքան էլ լայն և մեծ խոստումներ չը տայ թիւրքիան հայերին.— այնու ամենայն, այդ բոլոր զեղեցիկ օրէնքները և խոստումները դրօշի արդիւնք չեն տայ, և թուրք, ճշմարիտ, դրանց գործադրութեան վրա չի հակի մի անկախ, միմիայն Եւրոպայից կախված վերահսկող:

Աւելի կասկած. կազմեցէ նոյն իսկ շատ սահմանափակ օրէնքներ, տուէր թիւրքաց հայերին շատ քիչ արտօնութիւններ և իրաւունքներ, բայց այդ համեստ օրէնքների գործադրութիւնը, այդ համեստ իրաւունքների պաշտպանութիւնը յանձնեցէ մի անկախ, թիւրքիայից ոչինչ կախում չունեցող կոմիտեայի, և կը տեսնէք, որ այդ անկախ կառավարիչը երկրի մէջ կարող կը հաստատուի, և արդարութեան գործը կը հանի այն ուսնակօր վիճակից, որի մէջ նա այժմ գտնվում է թիւրքաց Հայաստանում:

Ով ձանձուրում է թիւրքիային, ով զիտէ թէ թիւրք պաշտօնեային համար օրէնքը և կարգը նրա կամայականութիւնն է, — նա

կը խոստովանի, որ այդ խօսքերը զուտ ճշմարտութիւն է, և ուրիշ ոչինչ:

Ահա այդ պատճառով մենք միացնում ենք մեր ձայնը Եւրոպական մամուլի և հասարակաց կարծիքի ձայնին, պահանջելով, որ բարձրագոյն կոմիտեայը Հայաստանում լինի մի անկախ մարդ, թիւրքիայից ոչինչ կախում չունեցող մի պաշտօնակց:

ՕՐՎԱՅ ՀԱՐՅՈՒ

X

Վ. Պօլսի լրագրիւրներում տպագրված է թիւրքաց կառավարութեան հետեւեալ պաշտօնական զեկուցումը:

«Պիլիկի կառավարիչ փոխտնօրէն մայիս 20-ու 21 թուակի երկու հեռագրով հետեւեալ տեղեկագրած է մեծ-կապրուսին:

«Գալպ գաւառակի Մէտարիք գիւղի իւլամ բնակիչներէն Միւրառ ու խալիտ դիմում ընելով բողոքեցին, թէ իրենք տեսուարի համար Մուշ երկրպետ ատենին, ճամբան Երնիք գիւղի հայերէն Միւրօղլու Ստեփան իր եօթը ընկերներով վրանին յարձակել, զոգրեցին ու զբաւանդեցին յախալակելու գիւղերը — ծեծեր է և թէ իրենց հետ գտնվող խղրահիմ անուն տղայ մը նոյն միջոցին անյայտ եղեր է: Ասոր վրա հարկ եղածը ի գործ դրվելով կողոպտանքներ ևս առնուեցան ու իրենց տէրերուն վերադարձուցան և կորսուած տղան ալ գտնուելով իր գիւղը վերադարձաւ: Այդ զեկուցումը հեղինակները, որոնք փախած են, ձեռքալալու համար պէտք եղածը ի գործ կը դրվի:»

Դա մի կողմից:

Իսկ միւս կողմից, այս օրերս Եւրոպական լրագրիւրների մէջ լայն տեսաւ մի յօդուած, մի թիւրքի ստորագրութեամբ, որ սկզբից մինչև վերջը այն միտքն է յայտնված, որ ոչ թէ թիւրքերն ու քրիւղներն են հայերին հարստահարում ու ճնշում, այլ ընդհակառակը, հայերն են նեղացնում, կեղեքում, հարստահարում և ամբողջ մահմէտականներին:

Դա թիւրքաց կառավարութեան խորամանկ, բայց մի և նոյն ժամանակ անկախ «փոխիւրիայի»

չառակ անոնց, որոնք Սահմանադրութիւնը հիմնեցին, և յայտարարեց թէ աշխատութեամբ և կալքով շատ օգուտներ յառաջ պիտի բերուեն:

Սեղանին վերջը պատրիարքն ու չորսը զբոսնողները եւսն դուրսի պարտէզը, ուր խնուած էր ժողովուրդը: Հին պատրիարքը դարձեալ ատենաբանեց. ըստ թէ այդ տիրութեան և սուգի օրերուն մէջ ուրախութեան հանդէս պէտք չէր կատարել բայց սրտեք զօրավիշ կուզեն, ոչ թէ կուզեն, ու մանաւանդ յուսատու ապագայի մը անկալութիւնը կայ. հետեւեալ խմբից որ կատարելապէս անդորր մնայ ժողովուրդը:»

Այժ, անդորր մնայ, ունեցաւ այն անդորրութիւնը, որ անցած տարի յեղափոխութիւն կը համարուէր: Երբեք, ճառեց, խօսեցաւ. ժողովուրդը: Այդ բոլոր հայերը խուրբուր բաժնուած էին. հոս «Չայրը Հիւնց», հոս «Սասունի Ողբ», անհիւ «Արիք Հայկազունը»: Կտուի մը վրայէն կատենարանէ տրեւում մը, ուրիշ տեղ մը կատենարանէ հանրային գործի մը, անդին գրագետ մը: Երբայրութեան և զօրութեան ծիածանն է, որ կը փայլէր ամենուն վրայ:

Եւ ահա այդ միջոցին հոս կը հանդիս տարիւնութեան բարձրագոյն պաշտօնատար մը ու կերթայ պատրիարքին ու նոր Ստորագրակի կողմէ հրահանգներ կուտայ: Եւրոպայի ուղած է իմանալ այս համախմբութիւն պատճառը, և տեղեկանալով որ կայսերական իրաւ է կայ, բան մը չըսեր: Կը յանձնարարէ որ եթէ բարեկարգութեամբ պիտի տօնեն հանդէսը, թող չարտնական միջնէ իրիկուն:

Երկրորդ չըջանն է: Առաջին չըջանը այն էր, երբ օսմանեան խեղճը զիպլօմաները աշխատում էին հաւատացնել Եւրոպային, թէ Սասունում ոչ թէ թիւրքերն են կոտորել հայերին, այլ հայերն են կոտորել թիւրքերին: Բայց այդ թիւրքական սուտը չօգնեց. լսողները միայն ծիծաղեցին:

Եւ ահա, այժմ մանկավ ստախոսութեան երկրորդ չըջանի մէջ, թիւրքերը աշխատում են ապացուցանել կաշառված յօդուածներով, և սլաշտ օսնակաւ զեկուցումներով.— որոնցից միայն մէկը առաջ բերեցինք.— թէ հայերն են, որ հարստահարում են թիւրքերին, հայերն են որ կողոպտում են խաղաղ թիւրք ճամբորդներին:

Այդ քաղաքական կոմէդիան լրացնելու համար մնում է էլի մի քաղ.— գրել թիւրքական բէթօր մը և երի ծրագիր և ներկայացնել մեծ պետութիւններին, առաջարկելով ընդունել այդ ծրագիրը, որպէս զի օսմանեան պետութեան մահմետական հաւատակները ապահովեն քրիստոնեայ հայերի հաղածանքները...

Եւ միաւրտ պէտք է լինել կարճելու համար, որ Բ. Գրան մէջ, կամ որ և է թիւրք միմիայն զիլում չէ ծագել մի ալգիլիսի միտք: Եթէ կարելի է հաստատել, թէ Սասունի կոտորածի ժամանակ հայերն էին կոտորում թիւրքերին, եթէ կարելի է պաշտօնապէս սնդղել, որ հայերն են կողոպտում թիւրք խաղաղ ճամբարաւորներին, ինչու չէ կարելի կազմել մի նոր ծրագիր, որի նպատակը լինի պաշտպանել խաղաղ, կուլտուրական, աշխատատեղ մահմէտական աղքատներին: Դա մի կողմից:

Եւ իսկապէս արժէ, որ թիւրքիան այդպիսի մի նոր հանարք անի ամբողջ Եւրոպայի գլխին, որ Սասունի սարսափելի կոտորածից յետոյ համարեա մի ամբողջ տարի է ձգձգում է խեղճ հայոց հարցը, որպէս զի նորից ապացուցանի այն, ինչ որ վաղուց ապացուցված է պատմութեան մէջ: Յուսատեանի, Սերբիայի, Բոլղարիայի, Րումինիայի տարեգրութեան արիւն օտ է: Զերու... Եւ քաղաքակիրթ Եւրոպայի այդ զգուշ, ծանր,

— Արդէն օրը իրիկուն եղած է, կըսէ պատրիարքը, արհամարհական հեղուկեամբ մը, ու կը ճամբէ:

Եւ արեւ մարը կը մանէր, երբ ժողովուրդը վերադարձաւ Վափուրի, Մարմարայի, Ոսկեղջիւրի եղեղները:

Սահմանադրութեան հանդէսը կատարելու համակարծիք չէինք, ինչպէս նախորդ նամակով մը ըսի. բայց ցոյց տուած պատճառներէն դուրս, պէտք է ըսել թէ մեծապէս հանդէսը խորին տրեպաւորութիւն մը թողուց, սրտատեղեց ժողովուրդը և ոգևորեց և ապացուց մը եղաւ թէ կառավարութիւնը սրբան տկար է և ժողովուրդը սրբան զօրեղ, երբ կամք ունենայ:

Եւ սակայն մեր ուրախութեան մէջ յիշենք Հայաստանը: Հարեւաւոր լուրերէն ահա սրտաճմիկ մը. Սասունի երախները անօթի կը մեռնին: Մուշի կառավարիչին քով 15 հազար ռուբլի կայ այդ խեղճներուն իւր հացաղին տարու համար, բայց չի տար, ըսելով թէ «թուրք մը կայ, ստորագրելու են»: Սասունցիներն այ կը սնդղեն, չեն ստորագրեր ու անօթի կը մեռնին: Տեսէք դեռ ուր է այս վայրենի կառավարութիւնը:

Հայաստանի բարեկարգութեանց թրագիրը լոնտոն ամբողջապէս հրատարակուել է. կը կարծեմ թէ անոր նկատմամբ լուրջ դիտողագիր մը պիտի ներկայացուի երեք դեպքաներուն:

Ֆրանսական հաւաքումը մը խզիւր հասած է: Վճարական ժամերը կը մօտենան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Վ. Պօլսի, մայիսի 30-ին

Գեղեցիկ օրերու իւր աւետաւոր ծագեցաւ մայիս 28-ի կիրակի առաւոյ: Գարնանային զով, անուշ օդով մը, 20,000-էն աւելի հայեր, պանդուխտ ու սրբեցի, գրադէտ ու արհեստաւոր, վաճառական ու սեղանաւոր, եկեղեցական ու աշխարհական, կը դիմէին ս. Փրկչի հիւանդանոցին ընդարձակ դռնը: Եւ այդ, ահապէս ամբողջութեամբ տարեկանի մը հետքը կը տեսնուէր: Մահին վրայ ստակալի տառապանքներով չարարուող մասին: Տիւրքիայի յիշատակը ահ ու սարսափ տարածած էր ամենուն վրայ:

Ս. Փրկչի մատուռին մէջ պատարագեց Գրիգորի եպիսկոպոս Ալէքսիան, ինքն ալ հաղածական եպիսկոպոս մը: Հոն էին այն ամեն եկեղեցականները, որոնց ամեն մէկը կրնար ըսել. «Հայաստանի տառապանքներուն կենդանի սրտակերն եմ»:

Պատարագէն ետքը հանդիսականներուն մէջ մասը նստաւ սեղանի, որ սրտատառած էր զետնայարկի սենեակի մը մէջ, որուն ցած պատուհանները հիւանդանոցի ընդարձակ բակին վրայ կը նայէին: Առաջին բաժակը ս. պատրիարքը

պարտեց, բացատրելով Սահմանադրութեան ոգին: Սահմանադրութիւնը ժողովրդին վերադարձուց այն իրաւունքները, որոնք ինչ էին և որոնք անցած էին դատակարգի մը ձեռքը: Այս ամբողջութեամբ կաշառված յայտնեց օսմանեան սուլթաններուն, որոնք վաւերացուցած էին այդ սահմանադրութիւնը:

Երկրորդ բաժակը առաջարկեց Ալէքսիան եպիսկոպոս, Ամենայն Հայոց Հայրապետին կենացը. ջերմ ծախսարութիւններ:

Այդ միջոցին ցածկէլ պատուհաններէն ժողովուրդը ձայն մը լսուեցաւ.— Սասուն, Սասուն: Եւ ահա Արշարունի վարդապետ ոտքի ելլելով առաջարկեց բաժակ մը ի յիշատակ անոնց «որք զարնուեցան, այլ զբաւանդեցին տարուեցան, ու թաշկիւմակներ կը սրբէին արցունքները, որոնք ամեն աչքէ կը վազէին. դուրսը սկսաւ մեղաձայնի, տիւրքաւոր, սիրտ կարտող Սասունի ողբերգը, որ կը վերջանայ ամեն մէկ տղին»:

«Այն Սասուն, Սասուն» Լայի իրիկուն մը: Այս միջոցին պարթև հասակով մէկի մը ներս մտնելով իր գաւառական հայրենի բարբառով խօսեցաւ սրտալուրջ փոքրիկ ճառ մը:

Չեղբը կուրծքին դրած, աչքերը երկնիք բարձրացնելով մարդկեց եկող տարի այս օրս տօնել Հայաստան:

Քաղաքական ժողովին ատենապետ Պ. Թրնիկեան բաժակ առաջարկեց ամեն բան տեսնող ամեն բանի հովող: Պատրիարքին համար: Եւ աղքային ժողովի ատենապետ Պ. Մուսիկեան ի յիշատակ անոնց, որոնք ինչ էին և որոնք անցած էին դատակարգի մը ձեռքը: Այս ամբողջութեամբ կաշառված յայտնեց օսմանեան սուլթաններուն, որոնք վաւերացուցած էին այդ սահմանադրութիւնը:

խոսեմ քաղաքականությանը, հենց այն բողոքին, երբ հայկական բեֆորմների ծրագիրը հրապարակի վրա է, թիւրքերն ապստամբանում է կատակներով, սինդրոլով, որ ոչ թէ մասնատկաններն են հաղածում քրիստոնեայ հայերին, այլ հայերը մասնատկաններին...

Կրանից աւելի մեծ կ'աւտաւ:

Խ. Մարտիան

ԱՍՏԻՆՅԱՆ ԿՆՈՋ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

Անգլիա դիտարկած աստուծոյնցինքը զեւ շարունակում են հետաքրքրութեան նիւթ լինել անգլիական հասարակութեան համար: Նորերը անգլո-հայկական ընկերութեան նախագահ Ստիվենսոնը տարաւ աստուծոյնցինքին՝ անգլիական համայնքների ժողովը, որտեղ նրանք ընդհանուր ուշադրութեւն գրաւեցին իրանց վրա:

Անգլիական «The New Age» շաբաթականը վերջին համարում զետեղեց մի անգլիկ յօդուած, աստուծոյնցինքն պահպանողների մասին: Յօդուածագիրը նկարագրում է նրանց կեդարանքը, նրանց կեցութիւնը, և այն տալարութիւնը, որ նրանք թողնում են: Հասցրած է աստուծոյնցինքին, որ մի տան և ուր մարկան կ'են, համակրելի զէնքով, խաչով, արտաշայտիչ աչքերով: Յօդուածագիրը առաջ է բերում մանրամասնաբար աստուծոյնցինքի պատմած արկածները և անցքերը:

Իսկ անգլիական «East End» լրագիրը նկարագրում է այն միտինգը, որ տեղի է ունեցել 1 ինչիս Զեպուս, մայիսի 26-ին, և որտեղ աստուծոյնցինքը, Քաղաքային Ալանի հետ միասին, մանրամասն կերպով ծանօթացրել են ժողովականներին Աստուծոյնցինքի դրոշմի հետ, աւելացնելով որ Անգլիայի նման մի ուրիշ և քրիստոնեայ ազգ պէտք է օգնութիւն հասնի Փարս-Ասիայի տանջվող քրիստոնէութեան: Մեծ տալարութիւն գործեցին թէ աստուծոյնցինքը Պետրոսի և թէ նրա կնոջ Ալիսին հասնելը:

Նմանի համար առաջ կը բերենք Ալիսին հասնի հետեւեղ կտորը.

«Ես մի հասարակ կ'իմ եմ, ասաց նա միտինգում, և սովոր չեմ բազմամարդ տեղում խօսել: Մեր երկրում թիւրքերը թոյլ չեն տալիս, որ ուսումնասիրենք ունենանք և մենք ուսում չենք կարողանում ստանալ, ինչպէս Անգլիայի կանայք: Գուր չեն կարող երեսկայել, սիրելիներ, թէ ինչ տանջանքներ ենք մենք կրում: Թիւրքերը կտորում են մեր հայրերին և մայրերին և մեր փոքրիկ երեխաներին, խլում են մեր քոյրերին և նրանց անպառուս: Եթէ պատմէի բոլոր մեզ հետ պատահածները, գուր չէիք հաւատալ: Վերջապէս որը տեսնէ, որը պատմենք:

«Ինչպէս ձեր, ձեր թաղուհու ծննդեան օրը, ես տեսայ ձեր զինուորներին, ինչպէս հարաւ և զեղեցիկ են նրանք: Բայց ինչ օգուտ այդ ընտանիքներին, երբ մեզ կտորում են մեր երկրում: Միթէ չէի կարելի գրանց ուղարկել մեր երկիրը, զայնու քրտնաբերի և թիւրքերին, որ մեզ չը սպանէին: Գուր միթէ քրիստոնեաներ չէիք: Մի թողէք, աղաչում եմ, որ մեր ազգը կտորվի»:

Այս պարզ խօսքերը լաւ տալարութիւն գործեցին: Ի միջի այլոց լրագիրը նկարագրում է հետեւեղ միջոցագիրը:

Ալիսին մօտ կանգնած էր մի փոքրիկ երեխայ: Յանկարծ Ալիսին խնայեց զէպի երեխան, նրան գրկեց, համբարեց և սկսեց սաստիկ արտասուել:—Նա յիշեց իր երեխային, որին քիւրդերը սպանեցին...

Հանդիսականները վրա այդ տեսարանը ծանր ազդեցութիւն աւելեց:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՌՈՓԱՎԱՆ ՄԱՄՈՒԸ

I

Կ. Պոլսից «Times» լրագիրն հետադրում են, որ սուլթանի առաջնութիւնը խանդավառ վերջին շաբաթների յուզմունքներէջ: Նրա մօտ նրկատվում են անդամարտութեան նշաններ:

II

Ընդունից հետադրում են, որ անգլիական կուսակցութիւնը արդու է բարձրագոյն կոմիտար նշանակելու վրա Հայաստանում, վալիները ընտրութեան երաշխաւորութիւնների և խոստ վերահսկող յանձնաժողով նշանակելու վրա: Ուրիշ կէտերում նա պատրաստ է զիջումներ անել:

III

«Gaulois» լրագիրը ասում է, որ իբրեւ պատասխան սուլթանի այն առաջարկութեան, թէ պէտք է եւրոպական պետութիւնները միջամտեն եզրիտական հարցը լուծելու մէջ, Անգլիան իսկին կենտրոնացրեց քրիստոնեական դրահաւոր նաւերի խոտը Միջերկրական ծովի վրա, Ալեքսանդրիայի հանդէպ:

Անգլիական լրագիրները շտապեցին նկատել, թէ ծովային Մէյմուրի հրամանատարութեան տակ զանաւոր դրահաւոր նաւերը աւելի մեծ ոյժ են ներկայացնում, քան այն նաւերը, որոնք ուղեւորութեան Ալեքսանդրիան 1882 թվին:

IV

Պարսիական «National» լրագիրն հաղորդում են Կ. Պոլսից, որ երեք պետութիւնների զեւ պահները մի նոր ժամանակամիջոց են տուել սուլթանին աւելի բաւարար պատասխան տալու համար, և այդ պատասխանը հազիւ կը տրվի յունիս 16-ին կամ 17-ին: Երեք զեւպահները հաստատապէս արշաւ են արհաւանել ծրագրի էական կէտերը:

V

Ինչպէս լրագիրները հաղորդում են, հայկական բեֆորմների ծրագրի վերջնական խնդրագրին եղել է Կ. Պոլսի ֆրանսիական զեւպահատան քաղաքագր Պիէրը Մարժերի (Pierre de Margerie):

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՂ

Մեր թղթակցին արդէն հետադրեց մեզ, որ ամենայն հայոց կաթողիկոսը անցեալ կիրակի մի քարոզ խօսեց Պետերբուրգի հայոց եկեղեցում: «Новости» լրագրի մէջ տարգրված է այդ քաղաքագրի կարճատու բովանդակութիւնը: Անա այդ քարոզի մի կտորը:

«Ներ խրաջելի ժողովուրդը գերի տարվեց Բաբելոն, Նիւսադէմից եկողներն նա հայրնում էր Նիւսադէմի առողջութեան և ողջութեան մասին: Գուր էլ, Նիւսադէմի ափերը զաղթելով գիտեմ, որ դուք ես նայն հարցը կը կը տար ինձ թէ՛ «Առողջ է արեւօք մեր մայր հայրերը—Հայաստան, կենդանի են արեւօք նրա զաւակները:

«Ես գիտեմ, ձեր մէջ ես կան թող հաւատով մարդիկ, որոնք յայտ կորցնել են, որոնք յուսահատութեամբ ասում են, Հայաստանը կործանվեց կամ կ'իսկործանէ: Բայց ես յայտնում եմ ձեզ, Հայաստանը զեւ կենդանի է և կենդանի կը մնայ: Չը նայելով որ Հայաստանը շատ կորուստներ ունեցաւ, այնու ամենայնիւ Աստուածային հովանու ներքոյ ահա 4000 տարի ապրում են նրա զաւակները: Այո, Հայաստանը կենդանի է և կենդանի կը մնայ, այն ինչ նրա հարեան մեծ ժողովուրդները—միջոցները և աստուծոյնցինքը—արդէն վաղուց կորան և նրանց հետը միայն պատմութեան մէջ է մնացել:

«Գուր լաւ գիտէք, որ Հայաստանը այժմ բաժանված է երկու մեծ հարեան պետութիւնների մէջ: Գուր բազմաւոր էք, ձեզ վիճակվեց մեծ Ռուսաստանի Ամենապարտաւոր Կայսրի զօրեղ հովանու տակ ազատ կերպով դաւանել ձեր ժողովրդական կրօնը և հալալ աշխատանքով վայելել երկրային կենսութեան բոլոր բարիքները: Բայց մեր եղբայրները Հայաստանի միւս մասում, ընկած թիւրքաց իշխանութեան տակ, հեծում են այժմ ամեն տեսակ զրկանքներից և տանջանքներից:

«Սակայն յուսահատվել պէտք չէ: Ոչինչ բան աշխարհում յախտնական չէ: Զարկեց ըստ երկայնի այն ժամը, երբ պէտք է վերջ տրվին և հայ բազմաւոր ժողովուրդի տանջանքներին: Հաւատարմ, որ Աստուածային Նախախաւարտութիւնը, բաւարար համարելով հաւատացեալ ժողովուրդի տանջանքները, իր աջ բազկով շարժեց քրիստոնեայ պետութիւնների սրբերը, և նրանք այժմ, միասնաբար քրիստոնեական սիրոյ մէջ զէպի հազար քրիստոնեայ ժողովուրդը, յուսանք և հաւատանք, որ վերջ կը գնեն մեր եղբայրների այժմեան սարսափելի դրութեանը թիւրքաց Հայաստանում, հորհրելով նրանց մի բարեկարգ վարչական կազմակերպութիւն: Հաւատարմ, որ ինքն սուլթանն եւ, հասկանալով մի այդպիսի բարեկարգութեան անհրաժեշտութիւնը, որ կատարելապէս համապատասխանում է և իր պետութեան շահերին, յօժարութեամբ կ'ընդունի ձեր համաձայնութիւնը:

է և իր պետութեան շահերին, յօժարութեամբ կ'ընդունի ձեր համաձայնութիւնը:

«Բայց մենք, Ռուսաստանի և թիւրքիայի հայերը, ի վաղուց հետեւ ընտելացել ենք մեր սրտի մէջ անուշահիշ չեմ հաւատ զէպի մեծ Ռուսաստանի ինքնակալ թագաւորի հովանաւորութիւնը և զօրեղ պաշտպանութիւնը, զէպի որը ի սկզբնէն ուղղված են եղել Արեւելի բազմաւոր քրիստոնեաների հայեաղքները: Նրանց ողբը միշտ լսելի է եղել մեծանոցի թագաւորներին, և քրիստոնեական եկեղեցին փրկվում էր թշնամիների սրբապաշտութիւնից: Թող մենք ես հաստատ յոյս տանենք, որ մեծ թագաւորների արժանաւոր Յաջորդը, մեր Ամենապարտաւոր թագաւոր Կայսր Նիկողայ II-ը վերջ կը գնի մեր եկեղեցու և մեր եղբայրների տանջանքներին թիւրքաց Հայաստանում և զբաւով կը պսակի իր Նախահայրերի փառաւոր յիշատակը: Եւ, ինչպէս մեզ սովորեցնում էր Փրկիչը առօրեւ, աւանդ, եղբայր իմ, քո որպէս յերկինս և յերկրի, ամէն:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՅ

Յունիսի 1-ին

Նախորդ համակով հաղորդած զէպը զեւ ես չէ մտաւորել: Խօսակցութեան նիւթը զեւ ես քաղաքործ քանանայի յանդուր վարմունքն է թիւրքական դպրոցում և այն նամակը, որ նա ուղղել է փոխանորդին՝ լի սպառնալիքներով և անպատկառ խօսքերով, և որի մի պատճէնը ուղարկում եմ խնդրութեամբ:

Նամակի մէջ վաղուց են այդ քանանայի երկու յատկութիւնները, նախ՝ յանդուրութիւնը և երկրորդ՝ տղիտութիւնը հայոց լեզուի մէջ, և ահա, այդ այն քանանայն է, որին Կիւրեղ եպիսկոպոս յանձնեց Պաշտանեան դպրոցի հայոց լեզուի դասերը, խելով այդ դասերը մի փորձված ուսուցիչ: Բայց հոգաբարձական դրոշմը կընկարագրուց և մինչև անգամ փոխանորդի յիշատակը այդ քանանայն մի ուրիշ միջոցի են զիմաց, թէ քանանայն: Գործերը կընկու յաջորդ օրը նա հոգաբարձական ժողով է գումարում, հրաւիրելով ներկայ հոգաբարձուներից մի երկուսին միայն, այլ և մի քանի մարդ առաջ հրաժարված հոգաբարձուին, որպէս զի այդ անկանոն ժողովով մենք հին խումբը պահել, հակառակ փոխանորդի և օրինաւոր հոգաբարձութեան կարկի: Սակայն հրաւիրվածները չը գնացին և ժողովը ինքն իրան լուծվեց: Եւ ահա այս բոլորից յետոյ միայն այդ քանանայն հակացաւ իր արածները և կիրակի օրվայ ժողովին ներկայանալով՝ խնդրեց նախաճաշութիւնից արձակել իրան, բայց յանդիմանութիւն ստացաւ և հեռացաւ ժողովից: Այս բոլորի համար բողոք է գնացել թէ Կաթողիկոսին և թէ սինոդին:

Պակաս տարօրինակ չէ նաեւ քաղաքագրի վարմունքը, որին հոգաբարձութիւնը հետադրեց քաղաքագրութիւնից: Կիրակի օրվայ հոգաբարձական ժողովը, որին ներկայ էին բոլոր հոգաբարձուները, բացի մէկից, մի թղթով գիմեց քաղաքագրին՝ պահանջելով գործերը: Սակայն քաղաքագրը չէ ուղղում գործերը յանձնել, զանազան պատճառներ բերելով: Տեսնե՛ք հետեւեղ ինչ է լինելու:

Կիրակի օրվայ ժողովում զբված էր նաեւ ուսուցչական խմբի հարցը, ժողովը միաձայն վճռեց արձակել խումբը և այսօր այդ վճիռը յայտարարվեց ուսուցչիներին: Այգլիտով թիւրքական զալոցը մաքրված է, և յոյս ունենք, որ ներկայ հոգաբարձութիւնը կը հրաւիրի մի լաւ տեսուչ և կը կազմի մի օրինաւոր խումբ:

Ա.—Գօ

ՆԱՄԱԿ ԽՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 7-ին

«Տեսնե՛ք ներքին գեղարուեստի մէջ» վերնադրով մեր յօդուածին «Տարաբա» պատասխանել է մի առաջնորդողով: Մեր յօդուածի միայն առաջին մասն է լուս տեսել, հարկաւոր էր սպասել շարունակութեան և ապա պատասխանել: Այգլիտ կը վարվէր նա, ով բանակուի մէջ հիւսարտութիւն է որոնում: Բայց այդպէս չէ վարվել «Տարաբա» յօդուածագիրը: Այդ բաւական չէ, յօշովված հարցերի

մասին խօսելու փոխարէն, յօդուածագիրը մի զբաղում հայոցում, անուանարկում է մեզ: Նա մեզ անուանում է «քրտնաբերող սահմանափակ ուղեղ», «մի լաթի համար պոռոտի աղաղակ բարձրացնող», «նախիրների կարգին պատկանող» և այլն և այլն:

Այդ հայոյանքներից և անվայել անխորտաւորներից մենք չենք վերաւորում և ահա թէ ինչու: Երեսկայե՛ք, ընթերցող, որ ձեր հակառակորդը մի մարդ է, որից զգուշ է ամբողջ հայոց պատկանութիւնը, որի վրա թքել են և այդ՝ ամենայն իրաւամբ, մեր ոչ թէ միայն առաջադէմ, այլ նայն իսկ յետադէմ կուսակցութիւնների բոլոր ներկայացուցիչները, որի «կեղտոտ ոգին», «ծախու գրկը» ազապուցված է դրակաւութեան մէջ յայտնի գոկամենաներով, որը առասպելական լրբութեամբ, ամենամարտաւար լեզուով անուանարկեց ամբողջ ազգից պաշտված մի մեծ հրապարակախօսի,—այդպիսի հանրածաւառ բարոյական մի այլանդակութիւն է ձեր հակառակորդը, ընթերցող, էլ ինչու զայրանալ, երբ այդ տիրահաշիկ ապագայ բանավարկութիւն, ինչպէս Միխայիլովիչն է ասում, «ВЫПЛЕСКИВАЕТ ИЗ СВОЕГО ГРЯЗНАГО НУТРА ПОМОИ». Էլ ինչու մերկացնել այդ մտավաճառի զարարութիւնները, երբ «ВЕСЬМЯДНОГО ВСЕ РАВНО УСТЫДИТЬ НЕЛЬЗЯ»: Ուստի մենք մտաւորութեան կը տանք մեր հակառակորդի այդ ծիծաղալար զայնոյանքները, և ի նկատի առնելով ընթերցողի շահերը, կը զիմեք հարցին, աշխատելով ջրեղ նրա անեկեկեթ կարծիքները:

Յօդուածագիրը ասում է. «Շիրմանցի կրիտիկոսը չէ հասկանում տեղեկեցիա ասած բանը. տեղեկեցիա մենք հասկանում ենք աւելի լայն բովանդակութեամբ, քան Շիրմանցիները: Տեսնե՛ք ներքին հեղինակին կամ բանաստեղծին յախտաւոր սրտը մաքրեն է, որոնց նա ձգտում է արծարծել իր երկերի մէջ: Անեկեկեթ և անմիտ որոշում: Բոլոր բանաստեղծներն էլ «իրանց երկերում ձգտել են արծարծել իրանց յախտաւոր մաքրել», հետեւաբար, ըստ յօդուածագրի, բոլոր բանաստեղծները տեղեկեցիոյ են, բայց չէ որ հենց ինքը տիրահաշիկ յօդուածագիրը խտառվանում է, որ կան ոչ տեղեկեցիոյ բանաստեղծներ, օրինակ, Լեւոնտովը: Այժմ տեսնե՛ք, թէ մեզինք աւելի կ'օգտակենու հեղինակներ ինչ են հասկանում տեղեկեցիա աւելում: Պրօֆեսոր Գոյնելով գրում է. «Եթէ միտքը, ինչպէս կրում են հասարակական—քաղաքական ընտրութիւն, եթէ անխաղախ է, որ հեղինակը, բանաստեղծը պատկանում է որոշ ուղղութեան կամ կուսակցութեան, նշանակում է այդ մտքերը, ինչպէս տեղեկեցիա է»: Նոյն կարծիք է տեղեկեցիայի մասին ուսաց ժամանակակից կրիտիկոս Արսենովը:

Ասացե՛ք, պոռոտախօս տգէտներ, ով է լաւ հասկանում տեղեկեցիա ասած բանը—մենք, որ կրկնել ենք այդ մտքերը, թէ դուք: Եւ այդպէս, «Տարաբա» յօդուածագիրը խօսում է տեղեկեցիայի մասին, միջոցաւ չը գիտե, թէ ինչ է տեղեկեցիա ասած բանը: Այդ հիմնական սխալից, իբրեւ անհրաժեշտ հետեւանք, առաջ են գալիս մի շարք այլ սխալներ:

Յօդուածագիրը գրում է. «Նախ պէտք է ստել պարսին, որ տեղեկեցիա և կուսակցական ոգի տարբեր բաներ են»: Գոյնելի վերը բերած բացատրութիւնից պարզապէս երևում է, որ տեղեկեցիոյ բանաստեղծը բնականաբար պէտք է կուսակցական մարդ լինի: Եւ իրաւ, Շէնգրինը, Նիկիտովը ուսաց մէջ, Բաֆլին, Գամառ-Բաթլիան մեր մէջ, լինելով տեղեկեցիոյ հեղինակներ, մի և նոյն ժամանակ կուսակցական մարդիկ էին: Համանման հարկաւոր օրինակներ կարելի է բերել: Եւ «Տարաբա» պոռոտախօս յօդուածագիրը հանրամատնութեւն այդ պարզ հիւսարտութիւնները ուղղում է ուղեւոր, չը տեսնել:

Մեր հակառակորդը կ'ուսուցի ուղեւոր անելով հասկանում է թափալութիւն, ինտուիթիւն, հացի խնդիր, նրա ստելով հասարակական կամ ազգային շահերը և կուսակցական շահերը տարբեր բաներ են: Ի հարկէ, դաւանում չէ կարող գաղափար ունենալ հայրենասիրութեան մասին և բնեկագոր, որ իր համբոյրները բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներին դրօշով է լսում, անկարող է ըմբռնել կուսակցութեան վեկտորները: Հերմիտները, Նիկիտովները, Արծրունիները, Բաֆլիները կուսակցական դրօշակի տակ էին արտապայտում ազգի պահանջները, ի՞նչ

“ՄՇԱԿԻ” ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՌՄ 6 (18 յունիսի) «Italie» լրագիրը հաղորդում է, որ յունիսի վերջում Հռոմում սպասվում են ուսուցիչ կառավարութեան լրագրողները և ուսուցիչական դասնախոսի մասին բանակցելու համար:

ԵՍՏՈՒՄԱՎԻՍ 8 յունիսի: Երեքշաբթի, յունիսի 6-ին, ստառիկ քամու ժամանակ, այրվեց Գանդի-լով քաղաքը: Քաղաքի մեծ մասը, քաղաքացիների կայքը, լողոր ստեղծանքը և եկեղեցիները այրվեցին: Մայր տաճարը աղատեցին հրդեհից: Բանաստեղծ-վածներին աղատեցին: Հիւանդանոցը, կալանա-ւորների տունը, և զանազան փողերը աղատեցին: Լուր է ստացում, որ մի քանի մարդկային զոհեր կան:

ՊԱՐԻՅ, 6 (18) յունիսի: Այս անգամ հեռագրի բնագիրը, որ թարգմանող կայսրին ուղարկեց հան-րապետութեան նախագահը: «Բարոն Մորենսէյմ» հէնց նոր յանձնեց ինձ ա. Այդրէյ չքանչանի նը-յանները, որ Չեր Սեծուրթեանը հաճելի էր չոր-հէլ ինձ: Սորին կերպով զգացված բարեկամու-թեան այդ նոր գրառականով, որ Չերը Մեծու-թեանը այսօր ստիպ է Ֆրանսիային յանձնել իմ, եւ չապագում եմ անդադրող յայտնել Չերը Մե-ծութեանը իմ ամենամեծ չնորհալու-թիւնը:

ՎԻՆՆԱ, 6 (18) յունիսի: «Neue Freie Presse» լրագրի տեղեկութիւնները համաձայն, ժամանա-կաւոր միջնորդութեան կազմակերպութիւնը կը յանձնի Ստորին Աւստրիայի փոխարքայ կան-կիւնայեցիկը:

ԲԵՐԼԻՆ, 6 (18) յունիսի: Այսօր, առաւօտեան 9 ժամին, Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչ ճանապարհ ընկաւ դէպի Համբուրգ: Բոսանց նա-ւատորմի հրամանատար փոխ-ծովագետ Սկրիբ-լով Իր շտաբի ուղեկցութեամբ, այսօր այցելեց թագաւորական ստորոգը:

ՎԻՆ, 6 (18) յունիսի: «Մարա» զրահակրի վրա կայացաւ ճաշ 85 անձանց համար: Հաշին ներ-կայ էին: Երկու շէնքեր, ծովագետ Վորոյ, օտար նաւատորմների բոլոր շտաբ-օֆիցերները իրանց աղիւսանանքով և գերանակաւ նաւատորմի աւագ օֆիցերները: Առաջինը եկաւ Ֆրանսիա-կան ծովագետը, որին զիմուտեցին թմբկահա-րութեամբ և զինուորական պատիւներով: Պրինց Զէյրիկի առաջարկեց կայսրի կենաց բաժակը: Զաչից յետոյ տեղի ունեցաւ սովորական մէկ ուրիշ զրահակրի վրա, մասնակցութեամբ միայն անգլիական օֆիցերները: Պրինց Զէյրիկը նախ առաջարկեց կայսրի կենացը, ապա, անգ-լիկներէ լեզուով վերադարձ թագուհու և անգլիա-ցիներէ կենացը: Երեկոյեան քաղաքում ջահալա-ուսթիւն կայ:

ՀԱՄԲՈՒՐԳ, 6 (18) յունիսի: Այսօր, 4 ժամ 20 րոպէին, այստեղ ժամանեց Վիլհէլմ կայսրը, չորս աւագ կայսերական պրինցների ուղեկցու-թեամբ: Երկաթուղու կայարանում նորին մեծու-թեանը զինուորացիներ քաղաքապետ Լէման և սե-նատի անդամները: Նաւահանգստից մինչև կայա-րան գնալու ժամանակ աղագնախոսութիւնը ողե-ւորված ցայտնիքով ողջունեց կայսրին: Առաւ-տեան 7 ժամին եկաւ Սպեցտիայի թագաւորը, մի փոքր յետոյ—Բալթիկ դուքսը: Հետեան զը-նացքով եկան Հեստինի մեծ դուքսը և Կորու-դեան դուքսը: Բոլոր օգոստոսախոս անձանցը կա-յարանում զինուորում էին այստեղի սենատի անդամները:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԷՃՄԻԱՌՆԻ, ձեռնարանի տեսուչ Կ. Կոստա-նեանին: Չեր ուղարկած յայտարարութիւնը աը-պագրելու համար՝ պէտք է ներդրել կրէք վը-ճարը ուղարկել: Չրի չի ապագրվի:

ՕՐԻՈՒԹԱՅ, Վ. Ամանեան, Մեհր փողով միայն յայտարարութիւններ ենք ապագրում, իսկ որ և է լուր՝ ոչ: Չեր հաղորդածը տարագրու-թեան համար անցարմար է, ուստի բարեհաճեցէր կարգադրել, որ յետ ստանան ձեր ուղարկած 1 րուպլին:

ԲԱՅԱՆ, Մ. Տէր-Ղուկասեան, Չեր ուղարկած 2 րուպլին յանձնեցինք կենտրոնական գրառվա-ւանոցին, ձեր խնդրածը ուղարկելու համար:

ՂԱՐԱՎԱՐ, Գ. Արթուրեան, Չեր ուղար-կած 1 րուպլին յանձնեցինք վերև յիշած գրառվա-ւանոցին: Մանուէլեանի «Աւստրական հաշա-պահութիւնը» ձեզ ուղարկելու համար:

ԲԱՄԱՆԱՆ, Ս. Տէր-Միստան, Հասցէն փո-խելու համար մարդներ չէք ուղարկել, և բացի դրանից չէք յայտնել թէ առաջ ինչ հասցէով էիք «Մշակ» ստանում,—ուստի ձեր խնդրքը չենք կարող կատարել և հասցէն չի փոխվի:

Խմբագիր՝ ԱԼԷԲԱՍԿԻ ԲԱՄԱՆԱՆ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻԲ-ԱՂԱՍԱԼԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԵԳԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբու-ժութեան, արֆիլիս և վեներական հիւանդու-թիւնների:
Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային չ.

Կին բժիշկ՝ Ա. Ի. ՍՈՐՈԿԻՆԱ—ՇՆԵՐԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին չ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. ականջի, կո-կորդի, քթի և կրծքի չ. երկուշարթի, չորեքշաբ-թի և ուրբաթի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երե-խայց չ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝
ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շա-բաթի:

Ա. Գ. ԳՈՐԿԻՍ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և ռեուկան օրգանների չ. ներքին և մարթի չ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՐԿԻՍ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խլի, ա-րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերահստւչ՝
Բժշկագետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ: (№ 72)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

“ԳԱՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ”

Վէպ Թիֆլիսի կենսիքի

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՅԻ

ԳԻՆԵ Է 60 ԿՈՊ.

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типо-графия Главного начальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև կենտրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրախաճառանոցներում: (№ 64) 3—5

ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԳՆԵԼ

ՉԻ (жеребень)

Արարական, Ղարաբաղի ցեղի, 4-ից մին-չև 6 տարեկան: Տալ ընդհանուր նկարագ-րութիւն, զոյնը և այլն, և գինը: Կառապան Ֆրանց, Լարթաւտորնայա, 4, բազում: (№ 64) 2—5

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԴԱՍԵՐ

Մ. ՄՈՒՐՏԱԳ. Թիֆլիսում կը մնայ այս ամառը, եթէ կունենայ 4-ից մինչև 8 ա-շտիքներ անգլիական լեզուի գասեր առ-նելու համար: Իւրաքանչիւր աշակերտից միայն 10 ռ. կառնի ամսական: Հասց՝, Լա-բորատորնայա, 4, բազում: (№ 65) 2—2

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՌԻՍՈՒՄ ԱՌԱՐՏԱՅ
Մի պարոն ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵ-ՉՈՒԻ ԴԱՍԵՐ ունենալ:

Համաձայն է և ամառանոց գնալ:

Հասցէն հարցնել Ներսիսեան գրպոցում: (№ 64) 1—5

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Ե. Ի. ՖԻՐԱՆՑԻՈՒՍ

(Սօլջակ, Վոդնոսնիկայա և Բուլշէշէվսկայա փողոցների անկիւն)

Վերադառնալով ընդունում է հիւանդ-ներին 5—7 ժամ երկօրեան: Մասնազի-տութիւն է. ԱՎԱՆՔԻ ԵՒ ԿՈՎՈՐԻԻ հիւան-դութիւններ: (№ 54) 10—10

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Շարաթ, յունիսի 10-ին

ԵՐԳԻՉՆ. Կ. ՇԱՀԼԱՄԵԱՆ

կը մայ մէկ

ԿՕՆՑԵՐՏ

մասնակցութեամբ երգչուհի Վ. Ի. ՍՏՐԱՅՈՎԱՅԻ (մեցցո-սոպրանո) և պիանիստկա Պ. Վ. ԲՕԴԻՅԿԱՅԻ: Տոմարները վաճառվում են թատրոնի կասսայում:
Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան:
1—1

ՄԻ ՌԻՍԱՆՈՂ ցանկանում է դասեր ունենալ ԹԻՖԼԻՍՈՒՄ: Տեսնել կարելի է առաւօտեան ժամը 8-ից մինչև 11-ը, իսկ երեկոյեան ժամը 2-ից մինչև 6-ը: Հասցէն՝ Большая-Кривая № 3, Տէր-Միքայէլեանց: 1—6

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է զիշերթիկ և երթեկե աշակերտներ. պատրաս-տում է զիմնադրայի, բէլական ուսումնարանի, կարէտների կորպուսի և այլ ուսումնարանների համար: Գիշերթիկները կայրեն և կուսանեն Բորժոմ ա-մառանոցում, իսկ երթեկեները Թիֆլիսում: Յանկացողները կարող են որդոց տալ՝ Բորժոմ ամառանոց տանելու համար:
Հասցէն. ТИФЛИСЪ. Солоаки. Гановская ул., № 11, կամ БОР-ЖОМЪ, дача Романова, Пансионъ Теръ-Акопова. (№ 65) 2—10

ՆԿԱՐՈՒՄ ԵՄ

Ատլասի վրա վեշափԱՌ ԿԱՌՈՂԻԿՈՍԻ, ԳՐԻԳՐ ԱՐԹՐՈՆՈՒՄ, ԲԱՅՅԻԻ պատկերնե-րը և զանազան տեսարաններ՝ բազմոցի բարձի երեսի համար՝ 3—5, լուսամտիկի մե-տաքսայ կտորների վրա նկարված 6 հայ գործիչների պատկերներով 3. մետաքսայ թաշկինակներ յայտնի հայ գործիչների, ժապաւենների վերոյիշեալ պատկերներով: 20 25, 30 կոպէկ: Ցանկացողները կարող են ստանալ ինձանից:
Հասցէն. Малая Банксая у. д. Мурадова № 7. А. Родіонова. (№ 65) 2—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COMP.

ՖԻՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՊԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգեմուտերի կանոնաւոր և ուղղակի երթեկեութիւն ՄԱՐՍԵՅԻՅ զէպի ԲԱՌՈՒՄ, չորեքշաբ-թի օրերը, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունիսից սկսած
ԵՒ ՓՈԽԱԳԱՐՁ

Բաթումից Մարսէյ, մանիւղ Տրապիզոն, Սամսոն և Պալիտ
ԲԱՌՈՒՄԻՅ ՇՈԳԵՆԱԿԵՐ ԴՈՒՐՄ ԵՆ ԳԱԼԻՍ: Չորեքշաբթի, յունիսի 14—26-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ չորեքուս, կապիտան Ժ. ԲՈՒԼԷՆ, և այլն, երկու շաբաթը մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժա-մին կէսօրից յետոյ:
Տոմարների գները ուղղակի երթեկեութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գներից պա-կասեցրած են:

Տեղեկութիւններ համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ըն-կերութեան ագէնտներին, ԲԱՌՈՒՄՈՒՄ պ. Վիկտոր Գ'ԱՐՆՈՒՄ, Նաբէքէմայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ Գ. Օ. Գ. Պարէնգէնտանու, Միտի փող. Նախիկի Արժրուտ. քաղվանաքա, ԲԱՌՈՒ պ. Սամուէլ Գիլլա-րովին, Կոլլաբեակիկայա հրապարակ, Նովորոսիսկում պ. Լուի Բէնու:
(Ե. չ.) (№ 64) 2—5

Ա. Չ. Գ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԳՊՐԱՆՈՑԻ համար հարկաւոր է տեսուչ, որ պէտք է աւանդէ շաբաթական 12 դաս: Ցանկացողները թող բարեհաճեն յայտնել իրանց պայ-մանները հօդաբարձութեան մինչև յունիսի 15-ը:
1—3 (№ 64) Անգամ հոգաբարձութեան՝ Գ. ՏԷՐ-ԽԱՅՏՐԱՅՆ

ՔՈՒԹԱՅԻՍԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԿԻՐ

որը արտասովոր սպիտակութիւն ունի և մեծ ամրութիւն ու խնայողութիւն է տալիս շինութիւններին, ծախվում է վազոններով Թիֆլիսի երկաթուղու կայարանում, պուրը 19 կոպէկով:
Գիմել ինժեներ ԼԵՈՎ.ԳԻՆՍԿԻՆ. Բոլշայա Վոլոդոնայա, տ. № 24, տուն Լա-անվի:
(Ե.—№ 50) 6—10

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԵՐ

ՍՆԵԴԱՐՈՐ ԽՄԻՉԳ (զլիւաւոր պահեստը Ռուսաստանի համար «ԵԱՎԱ» Ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Ծախվում է կոյնիւղ և դեղային ապրանքների բոլոր լաւ մազաղիններում 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվէրպէնի համաշխարհային ցուցա-հանդիսում 1894 թւին:
(№ 151) 37—50